ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> հուլիսի 2012 թվականի N 21-Ն

. ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ, 34-րդ հոդվածի 1-ին կետերի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արարատի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի հոդվածներում կատարել ներքոհիշյալ փոփոխությունները

1. Պակասեցնել՝

ա/Համայնքային բյուջեի 0111.51 <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում >> ծրագրի 4214 <<Ջրի ծառայություն>> հոդվածը 1,5 հազ. դրամով, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 1998,5 հազ. դրամ:

բ/ 0661. 53 <<Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում>> ծրագրի 4251 շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածը 2500,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 37196,8 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 37906,8 հազ. դրամ:

2.Ավելացնել՝

ա/ Համայնքային բյուջեի 0111.51 <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում >> ծրագրի 4232 <<Համակարգչային ծառայություն>> հոդվածը 1,5 հազ. դրամով, սահմանելով վերջինիս ծրագրի ծախսային պլանը 211,5 հազ. դրամ:

բ/ Համայնքային բյուջեի 0161. 51 << Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> /այլ դասերին չպատկանող/ ծրագրի 4241 <<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածը 300,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 600,0 հազ. դրամ, իսկ ծրագրի պլանը 1708,4 հազ. դրամ:՝

գ/ 0451;59 <<Փողոցների պահպանում և շահագործում>> ծրագրի 4252 <<Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> ,հոդվածը 600,0 հազ. դրամ:

դ/ 1071,54 <<Սոցիալապես անապահով անձանց աջակցություն >> ծրագրի 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածը 1000,0 հազ. դրամ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 5000,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսայն պլանը 5800,0 հազ. դրամ:

ե/ 0861.51 <<Հանգիստ, մշակույթ և կրոն /այլ դասերի չպատկանող/>> ծրագրի 4239 <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ >> հոդվածը 600,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 1565,6 հազ. դրամ,իսկ ծրագրի ծախսային պլանը 2065,6 հազ. դրամ:

3. Քաղաքապետին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույց:

ԿՈՂՄ (6)

Ավագանու անդամներ՝

1. ԱՐԱՋԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
3. ՅՈՒՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ _____
5. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ _____
6. ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> հուլիսի 2012 թվականի N 22-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 08. 12. 2011թ. և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին >> 08.02.2012թ. ՀՀ օրենքների դրույթներով՝

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատի քաղաքային համայնքի ավագանու կանոնակարգում, ընդունված ավագանու 15.09.2009թ. թիվ 7 նիստի որոշմամբ՝ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները

1.1. Կանոնակարգի 2-րդ բաժինը լրացնել 2.8 կետով.

<<2.8. Համայնքի անունից համայնքի ավագանին իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթներ>>

1.2. Կանոնակարգի 3-րդ բաժնի 3.1. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

<<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի իմաստով աշխատակազմ է համարվում քաղաքապետարանի աշխատակազմը>>:

1.3. Կանոնակարգի 17-րդ բաժնի

ա/ 18-րդ կետը ամբողջությամբ հանել.

բ/ 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<17.20. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականությունը հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակները, ժամկետները,նպատակը , օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը:Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը , մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:>>

գ/. 27-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<Համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:>>

2. Ընդունել Արարատի քաղաքային համայնքի ավագանու կանոնակարգում կատարված վերը նշված փոփոխություններն և լրացումները:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ (6)

Ավագանու անդամներ՝

1. ԱՐԱՋԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
3. ՅՈՒՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ _____
5. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ _____
6. ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ